ԳԼՈՒԽ 3

«Աբելինա»

«Մի կողմից երջանիկ մանկություն եմ ունեցել,
մյուս կողմից՝ անսովոր, որովհետև
12 տարեկանում թողեցի իմ ընտանիքն
ու տեղափոխվեցի Լիսաբոն»:

Այլևս չկա այն անշուք հանրակացարանը, չկա երեք ննջասենյակով այն համեստ բնակարանը, որտեղ ծնվել է Ռոնալդուն: Մադեյրայի մայրաքաղաք Ֆունչալի, Սանտո Անտոնիո թաղամասի Քվինտա դե Ֆալկաո փողոցի 27Ա տունը 2007 թվականին քանդեցին, որ մարդիկ ապօրինի չզավթեն այն:

Այդ ժամանակ Ավեյրոների ընտանիքը վաղուց տեղափոխվել էր: Կրիշտիանուի մայրը՝ Դոլորեսը, այժմ ապրում է Ֆունչալի մյուս կողմում գտնվող Սան Գոնչալո թաղամասի մեծ, սպիտակ տանը, որից տեսարան է բացվում դեպի Ատլանտյան օվկիանոս: Հրաշալի տուն է, որը նրա համար գնել է որդին, եղբոր՝ Հյուգոյի և քրոջ՝ Կատյայի տների կողքին:

Սարալանջին սփռված բնակելի տներից բաղկացած երբեմնի աղքատ Քվինտա դե Ֆալկաոն Եվրոպական Միության ներդրումների շնորհիվ վերջին տարիներին փոխվել է:

Կառուցվել են նոր բնակելի թաղամասեր, որտեղ ապրում են միջին խավի պորտուգալացիներ, որոնցից շատերը սարսափում էին ափամերձ շրջանի բնակարանային գներից:

Փոքրիկ, նեղ ճանապարհի վերջում, որտեղ ֆուտբոլիստի տունն էր, այժմ ազատ հողակտոր է՝ առատ թփուտներով, ֆուտբոլային փոքր դաշտ և բար: Բայց երկրպագուները լավ էլ գտնում են տան տեղը. տաքսիստները մի քանի եվրոյի դիմաց էքսկուրսիա են կազմակերպում՝ ցույց տալով տունը, որտեղ նա մեծացել է, դպրոցը, որտեղ առաջին անգամ սկսել է ֆուտբոլ խաղալ... Պորտուգալացիների հավաքական պատկերացումներում Ռոնալդուն ստվերում է թողել Մադեյրա այցելած այնպիսի հռչակավոր անձանց, ինչպիսիք են Ուինսթոն Չերչիլը, Ավստրիայի կայսրուհի Էլիզաբեթ Սիսին, Ավստրիայի կայսր Կարլ I-ը, Ջորջ Բեռնարդ Շոուն, Ռիլկեն, Քրիստափոր Կոլումբոսը և Նապոլեոնը:

Մադեյրան Ատլանտյան կղզեխումբ է՝ Լիսաբոնից 860 կմ հեռավորության վրա: Բնակեցված են Մադեյրա և Պորտո Սանտո կղզիները, մյուս երեք փոքրիկ կղզիներում ոչ ոք չի ապրում: Մադեյրա կղզեխումբը, որը զբոսավարները «Ատլանտյան օվկիանոսի պարտեզ» են հռչակել, տարածվում է 57 կմ երկարությամբ և 22 կմ լայնությամբ հրաբխային ապարի վրա: Ամենաբարձր կետը Պիկո Ռիվուն է, որի բարձրությունը ծովի մակարդակից 1862 մ է: Մայրաքաղաքը՝ Ֆունչալը, 110 հազար բնակիչ ունի:

Այստեղ է ծնվել Կրիշտիանու Ռոնալդուն՝ «Կրուզ դե Կարվալիո» հիվանդանոցում: Փետրվարի 5-ն էր, օրը՝ երեքշաբթի, ժամը՝ 10:20: 52 սմ էր, 4 կգ: Նա Մարիա Դոլորես Դոս Սանթոսի և Խոսե Դինիս Ավեյրոյի 4-րդ զավակն էր, Հյուգոյի, Էլմայի

և Կատյայի կրտսեր եղբայրը: Կատյան արդեն 9 տարեկան էր, այնպես որ Դոլորեսի համար սա չպլանավորած հղիություն էր: Եվ այժմ ծագել էր նորածնին անվանակոչելու խնդիրը:

«Քույրս (այդ ժամանակ նա մանկատանն էր աշխատում) ասաց, որ եթե տղա լինի, կարող ենք Կրիշտիանու անվանել,- հիշում է Դոլորեսը: - Ես մտածեցի, որ լավ ընտրություն է: Ռոնալդ Ռեյգանից հետո ես և ամուսինս հավանում էինք Ռոնալդու անունը: Քույրս ընտրեց Կրիշտիանուն, մենք՝ Ռոնալդուն»:

Խորհրդանշական է, որ Կրիշտիանու Ռոնալդու Դոս Սանթոս Ավեյրոյի մկրտությունը, որն անցկացվեց Սանտո Անտոնիո եկեղեցում, զուգադիպեց ֆուտբոլային մի իրադարձության հետ: Ազատ ժամանակ Խոսե Դինիսն օգնում էր Սանտո Անտոնիոյի «Անդորինա» սիրողական ֆուտբոլային թիմին, որպես հանդերձանքի պատասխանատու: Թիմի ավագ Ֆեռնաո Բառոշ Սոուզային նա խնդրեց դառնալ իր նորածին երեխայի կնքահայրը: Արարողությունը նախատեսված էր երեկոյան 6-ին, բայց նախքան այդ, ժամը 4-ին, «Անդորինան» պետք է խաղար «Ռիբեյրա Բռավայի» հետ:

Քահանան՝ Անտոնիո Ռոդրիգես Ռեբոլան, նյարդայնանում էր: Նա արդեն մկրտել էր մյուս երեխաներին, բայց լուր չկար ո՛չ հորից, ո՛չ կնքահորից: Դոլորեսն ու կնքամայրը պտտվում էին եկեղեցու շուրջ՝ փորձելով հանգստացնել քահանային: Ֆեռնաոն ու Դինիսը կես ժամ ուշացումով ժամանեցին, և արարողությունը վերջապես սկսվեց:

Ընտանեկան ալբոմի առաջին լուսանկարներում Կրիշտիանու Ռոնալդուն իր խոշոր աչքերով նայում է ուղիղ ֆոտոխցիկին: Նա կապույտ և սպիտակ շորերով է, սպիտակ կոշիկներով, երկու դաստակներին՝ ոսկե թևնոցներ, մատին՝ ոսկե մատանի,

պարանոցին՝ երկար շղթայով խաչ: Մեծանալուն զուգընթաց լուսանկարներում նրա մազերը գանգրանում են, ժպիտը դառնում է ավելի բաց, երբ կորցնում է առջևի ատամները:

Դինիսն այգեպան էր քաղաքապետարանում, Դոլորեսը խոհարարություն էր անում, որ կարողանա ուտելիք հասցնել իր երեխաներին: 20-ամյա Դոլորեսը հազարավոր պորտուգալացիների պես արտագաղթել էր Ֆրանսիա, որտեղ երեք ամիս հավաքարար էր աշխատել: Ամուսինը պատրաստվում էր միանալ նրան, բայց չկարողացավ, և Դոլորեսը վերադարձավ Մադեյրա: Նրանք արդեն երկու երեխա ունեին:

Կյանքը հեշտ չէր Ավեյրոների ընտանիքի համար: Այն դըժվար էր բոլորի համար, ովքեր հեռու էին առափնյան զավթած հյուրանոցային բիզնեսից: 6-հոգանոց ընտանիքն ապրում էր փոքրիկ տանը, որն անձրևի ժամանակ թրջվում էր տասնյակ անցքերից թափվող ջրերից: Դոլորեսը քաղաքապետարանից աղյուս ու շաղախ էր բերում՝ փորձելով փակել անցքերը:

Բայց Կրիշտիանուի համար դա երջանիկ մանկության շըրջանն էր: 2-3 տարեկանում, սկսելով խաղալ բակում կամ Լոմբինյո փողոցում, նա բացահայտեց իր լավագույն ընկերոջը՝ ֆուտբոլը:

«Սուրբ Ծննդյան տոնին ես նրան խաղալիք նվիրեցի՝ հեռակառավարվող մեքենա: Մտածում էի՝ դա նրան կզբաղեցնի,- հիշում է նրա կնքահայր Ֆեռնաո Սոուզան: - Բայց երեխան նախընտրեց ֆուտբոլ խաղալը: Քնում էր իր գնդակի հետ, երբեք ձեռքից բաց չէր թողնում: Գնդակը միշտ թևի տակ էր: Ուր էլ գնար, հետը տանում էր»:

Կրիշտիանուն հաճախում էր Էստեռնատո դե Սաո Ժոաո դա Ռիբեիրայի մանկապարտեզը, որը տնօրինում էին ֆրանցիս-

կյան միանձնուհիները*: Վեց տարեկանում նա ընդունվում է տեղի տարրական դպրոց: Միջնակարգը շարունակում է Գոնչալվես Զառկո դպրոցում, որը «Բառեյրո» ստադիոնին մոտիկ լինելու պատճառով առավել հայտնի է որպես Բառեյրո դպրոց: Այդ ստադիոնում իր հանդիպումներն է անցկացնում պորտուգալական հանրահայտ «Մարիտիմո» ֆուտբոլային ակումբը: Կրիշտիանուն սովորող տեսակ չէր: Ծույլիկ չէր, բայց գիրք կրծող էլ չէր: Եվ երջանիկ էր իր միջակ գնահատականներով:

Նրա ուսուցիչ Մարիա դոս Սանթոսն իր նախկին աշակերտին հիշում է որպես բարեկիրթ, ուրախ երիտասարդի և դասընկերների համար լավ ընկերոջ: Երբ նրան հարցրեցին, թե որն էր Կրիշտիանուի սիրելի զբաղմունքը, պատասխանեց. «Այս դրոներից դուրս ֆուտբոլը նրա համար ամեն ինչ էր: Նա այլ զբաղմունքներ էլ ուներ՝ երգեր էր սովորում, տնայիններն անում, բայց սիրում էր ժամանակ գտնել հատկապես ֆուտբոլի համար: Երբ իսկական գնդակ չէր լինում (և հաճախ իսկապես չէր լինում), Կրիշտիանուն գնդակ սարքում էր իր գուլպաներից: Նա միշտ ժամանակ էր գտնում խաղահրապարակում ֆուտբոլ խաղալու համար: Չգիտեմ, թե ինչպես էր կարողանում դա անել»:

Ֆուտբոլ խաղում էր և՛ խաղադաշտում, և՛ փողոցում: «Երբ դպրոցից տուն էր գալիս, սովորաբար ուղարկում էի իր սենյակ դաս սովորելու,- պատմում է Դոլորեսը,- միշտ ասում էր, որ դաս չունի: Ես գնում էի ճաշ եփելու, իսկ ինքն առիթը բաց չէր թողնում: Պատուհանից դուրս էր ցատկում՝ հետը յոգուրտ կամ միրգ վերցնելով, գնդակը թևի տակ էր դնում ու փախչում: Խաղում էր մինչև երեկոյան ինն անց կես»:

---

* The Franciscan Sisters of Christian Charity - Ֆրանցիսկյան քույրերի քրիստոնեական բարեգործական միությունը կաթոլիկ կանայք հիմնել են 1869-ին:

Դա կարծես բավարար չէր, և նա սկսեց բաց թողնել դասերն ու ֆուտբոլ խաղալ: «Ուսուցիչներն ասում էին, որ պետք է պատժել նրան, սակայն երբեք չեմ արել դա: Նա պետք է շատ մարզվեր՝ ֆուտբոլային աստղ դառնալու համար»: Ռոնալդուն էլ հետագայում խոստովանում էր. «Ես միշտ ֆուտբոլ էի խաղում ընկերներիս հետ: Դա այն էր, ինչ սիրում էի անել: Այդպես էի անցկացնում ժամանակս»:

Նա խաղում էր փողոցում, որովհետև մոտակայքում ֆուտբոլի դաշտ չկար: Հատկապես դժվար էր Քվինտա դե Ֆալկաո փողոցում խաղալը, քանի որ այստեղով հաճախ ավտոբուսներ, մեքենաներ և մոտոցիկլետներ էին անցնում: Երեխաները ստիպված էին լինում ամեն անգամ հեռացնել դարպասաձողերին փոխարինող քարերը և խաղը վերսկսելու համար սպասել՝ մինչև երթևեկությունը դադարի: Խաղերը կարծես անվերջ բախումներ լինեին շենքերի տղերքի կամ թաղի ընկերների միջև: Դադար էր տրվում միայն այն ժամանակ, երբ գնդակն ընկնում էր հարևանի պարտեզը: Եթե դա պարոն Ագոստինոյի պարտեզն էր, ապա նա սկսում էր սպառնալ, որ կծակի գնդակը, և Դոլորեսին ու մյուս մայրերին զգուշացնում էր, որ իրենց երեխաներին կարգի հրավիրեն:

Կրիշտիանուն ժամերով միայնակ խաղում էր ջրհորի մոտ՝ գնդակը պատին հարվածելով: Ջրհորն ու փողոցը նրա առաջին մարզահրապարակն էին: Հենց այս մայթերի, ասֆալտի ու մեքենաների արանքում, մեծ ու փոքր երեխաների հետ խաղալով, Ռոնալդուն սովորեց այն հնարքներն ու տեխնիկան, որոնք նրան հետագայում դարձրին լավագույններից մեկը՝ դառնալով նրա այցեքարտը: «Նա ամբողջ օրը փողոցում էր անցկացնում՝ իսկական հնարքներ բանեցնելով գընդ-

դակով, որը կարծես նրա ոտքին կպած լիներ»,- վերհիշում է Ադելինո Անդրադեն՝ Ավեյրո ընտանիքի հարևանը:

«Երբ գործը հասնում էր ֆուտբոլին, նա ցուցադրում էր իր ամբողջ ձիրքը,- պատմում է Կրիշտիանուի քույրը՝ Էլման: - Բայց մեր մտքով էլ չէր անցնում, որ նա այսքան առաջ կգնա»:

Ֆուտբոլի աշխարհում Կրիշտիանուն առաջին քայլն արեց 6 տարեկանում: Նրա զարմիկ Նունոն խաղում էր «Անդորինայում», և Կրիշտիանուն խաղադաշտում մի քանի անգամ արդեն եղել էր հոր հետ: Մի անգամ Նունոն նրան հրավիրեց իր խաղը դիտելու և հարցրեց՝ ցանկանո՞ւմ է խաղալ որևէ թիմի կազմում: Կրիշտիանուն որոշեց միանալ մարզումներին և փորձել: Դոլորեսը և Դինիսն ուրախ էին կրտսեր որդու որոշման համար, քանի որ իրենք էլ միշտ սիրել են ֆուտբոլ: Դինիսը և իր ավագ որդի Հյուգոն «Բենֆիկայի» երկրպագուներ էին, մինչդեռ Դոլորեսը պաշտում էր Լուիշ Ֆիգուին* և Լիսաբոնի «Սպորտինգ» թիմը:

1994-95 թթ. մրցաշրջանում 9-ամյա Կրիշտիանու Ռոնալդու դոս Սանտոս Ավեյրոն Ֆունչալի ֆուտբոլային ասոցիացիայից ստանում է իր առաջին մարզական արտոնագիրը՝ N 17182-ը, և սկսում է կրել «Անդորինայի» բաց կապույտ մարզահագուստը: «Անդորինան» երկար պատմություն ունեցող տեղական ֆուտբոլային ակումբ է, որը հիմնադրվել է 1925 թ.

---

* Luís Filipe Madeira Caeiro Figo - Լուիշ Ֆիլիպե Մադեյրա Ֆիգու (ծնվ. 1972 թ.), Պորտուգալիայի բոլոր ժամանակների լավագույն ֆուտբոլիստներից մեկը: Խաղացել է որպես կիսապաշտպան: Եղել է «Բարսելոնա» ֆուտբոլային ակումբի թիմի առաջին օտարազգի ավագը, ՖԻՖԱ-ի վարկածով աշխարհի լավագույն ֆուտբոլիստը (2001), «Ոսկե գնդակի» դափնեկիր (2000), Եվրոպայի առաջնության արծաթե (2004) և բրոնզե (2000) մեդալակիր: 127 անգամ խաղացել է Պորտուգալիայի հավաքականի կազմում. սա ռեկորդ էր, որ Կրիշտիանու Ռոնալդուն ավելի ուշ կգերազանցի:

մայիսի 6-ին: Անդորինա պորտուգալերեն նշանակում է ծիծեռնակ: Ըստ ավանդույթի՝ ակումբն այդպես է կոչվել, քանի որ մի ֆուտբոլիստի հոյակապ գոլին հաջորդել է ծիծեռնակի սլացքը:

Տարրական դպրոցի ուսուցիչ Ֆրանսիսկո Աֆոնսոն, որը դասավանդում էր Կրիշտիանուի քույր Կատյային, Մադեյրայի երիտասարդական լիգայում 25 տարի զբաղվել է մարզչական գործունեությամբ: Նա Ռոնալդուի առաջին մարզիչն է և երբեք չի մոռանա, թե ինչպես առաջին անգամ յոթ տարեկան տղային տեսավ «Անդորինայի» ստադիոնում:

«Կրիշտիանուն ապրում էր ֆուտբոլի համար,- հիշում է նա: - Արագաշարժ էր, տեխնիկապես անգերազանցելի և հավասարապես լավ էր խաղում թե՛ աջ ոտքով, թե՛ ձախ: Նիհար էր, սակայն իր տարեկիցներից մի գլուխ բարձր: Տղան, անկասկած, չափազանց շնորհալի էր, գեներով եկող բնատուր տաղանդ ուներ: Նա միշտ ընկած էր գնդակի ետևից: Հենց ինքը պիտի լիներ խաղն ավարտողը: Շատ կենտրոնացած էր և աշխատում էր քրտնաջան՝ անկախ նրանից, թե դաշտի որ հատվածում էր խաղում: Խորապես վշտանում էր, երբ չէր կարողանում խաղալ կամ բաց էր թողնում խաղը»:

Ակումբի նախագահ Ռուի Սանթոսը մի զվարճալի դեպք է հիշում, որը եղել է 1993-94 թթ. մրցաշրջանի ֆուտբոլային հանդիպմանը: «Անդորինան» խաղում էր ընդդեմ «Կամաչայի», որն այդ ժամանակ կղզու ամենաուժեղ թիմերից մեկն էր: Երկրորդ խաղակեսում «Անդորինան» պարտվում է 0:2 հաշվով, և Ռոնալդուն այնքան է տխրում, որ հեկեկում է մի երեխայի նման, որից կարծես իր սիրած խաղալիքն էին խլել: 2-րդ խաղակեսին նա խաղադաշտ է դուրս գալիս և երկու գնդակ է խփում՝ թիմին հաղթանակ պարգևելով 3:2 հաշվով:

Նա չի սիրում պարտվել: Ուզում է հաղթել ամեն անգամ: Իսկ երբ թիմը պարտվում է, Ռոնալդուն արտասվում է»:

«Ահա թե որտեղից է առաջացել նրա մականունը՝ լացկան երեխա»,- բացատրում է Դոլորեսը: - Նա հեշտությամբ լալիս էր ու բարկանում, երբ թիմակիցն իրեն չէր փոխանցում գնդակը, կամ երբ թիմն իր ուզած ձևով չէր խաղում»: Մեկ այլ մականուն էլ էր ստացել՝ *Աբելինա,* այսինքն՝ փոքր մեղու, քանի որ երբեք կանգ չէր առնում: Ժրաջան մեղվի նման նա միշտ զիգզագաձև վազվզում էր դաշտում: Տարիներ անց Մադրիդում, Կրիշտիանուն նույն անունով էր կնքելու իր յորկշիրյան տերյեր ցեղատեսակի շանը:

«Ռոնալդուի նման ֆուտբոլիստի ամեն օր չես հանդիպի,- հավելում է Ռուի Սանթոսը: - Իսկ երբ հանդիպում ես, հասկանում ես, որ նա գերաստղ է, որը տարբերվում է ֆուտբոլ խաղացող մնացած բոլոր երեխաներից»: Դժբախտաբար, «Անդորինան» լիգայի ամենաթույլ թիմերից մեկն էր և, երբ հանդիպում էր «Մարիտիմոյի», «Կամարա դը Լոբոսի» կամ «Մաչիկոյի» հետ, միշտ չոր հաշվով տանուլ էր տալիս: Ռոնալդուն չէր ցանկանում խաղալ, քանի որ նախապես գիտեր, որ պարտվելու էին: Սակայն ամեն անգամ հայրը տուն էր գալիս, նրան քաջալերում էր, համոզում հագնել մարզահագուստն ու մարզակոշիկները և թիմի հետ խաղադաշտ դուրս գալ: «Միայն թույլերն են հանձնվում»,- ասում էր նա: Այս խոսքը Ռոնալդուն երբեք չմոռացավ:

Կարճ ժամանակ անց նրա անունը հայտնի դարձավ ամբողջ կղզում: Կղզու երկու մեծ ակումբները՝ «Նասիոնալ դե Մադեյրան» և «Մարիտիմոն», սկսեցին հետաքրքրվել փոքր մեղվով: Գնդակի հետ վարվել իմացող երեխայի մասին լու-

ները հասան Ֆեռնաո Սոուզային՝ Կրիշտիանուի կնքահորը, որն այդ ժամանակ «Նասիոնալ դե Մադեյրա» պատանեկան թիմի մարզիչն էր: «Ինձ համար հաճելի բացահայտում էր, որ տղան, որի մասին այդքան խոսում էին, հենց իմ սանիկն է,- պատմում է նա: - Գիտեի, որ նա ֆուտբոլ է խաղում, բայց պատկերացում անգամ չունեի, որ այդքան լավ է խաղում: Նա մյուսներից անհամեմատ առաջ էր անցել: Գնդակի հետ գեղեցիկ էր վարվում և, անկասկած, մեծ ապագա էր ունենալու: Ես անմիջապես հասկացա, որ այդ երեխան Աստծո պարգև էր իր ընտանիքի համար»: Առանց երկմտելու Սոուզան տղային տարավ «Նասիոնալ»: «Խոսեցի մոր հետ, բացատրեցի, որ դա նրա համար լավագույն տարբերակն է, «Անդորինայի» հետ էլ համաձայնության եկանք»:

Սակայն ամեն ինչ այնքան հեշտ չէր, որքան Սոուզան է ներկայացնում: Դինիսը նախընտրում էր, որ իր տղան խաղա «Մարիտիմոյում»: Ակումբի պատմական «Ալմիրանտե Ռեյիս» խաղադաշտը մոտ էր հայրական տանը: Բացի դրանից տղային դուր էր գալիս կանաչ ու կարմիր մարզահագուստը*, նա սիրում էր «Մարիտիմոն»: Համաձայնության չգալով Ռուի Սանթոսը հանդիպում է կազմակերպում երկու ակումբների հետ՝ հնարավոր առաջարկները քննարկելու համար, սակայն «Մարիտիմոյի» պատանեկան թիմի մարզիչը չի գալիս «Անդորինայի» նախագահի հետ հանդիպմանը: Մնում էր Կրիշտիանուին ուղարկել «Նասիոնալ» ակումբ՝ 20 գնդակի և պատանեկան թիմի համար 2 զույգ մարզահագուստի դիմաց:

Գործարքն այդ ժամանակ արժեքավոր չէր, սակայն հետագայում «Անդորինան» պատմության մեջ պետք է մտներ

* «Մարիտիմու» ակումբի խորհրդանիշի, մարզաշապիկի գույներն են:

որպես «Ոսկե գնդակ» նվաճող առաջին ակումբ և ֆինանսավորում ստանար քաղաքապետարանից: Հին խաղադաշտի հողե հարթությունն այժմ փոխարինվել է արհեստական ծածկով և շրջապատվել հսկայական լապտերներով: Սակայն սա ամենը չէ: «Նասիոնալի» հետ գործարքն ամրագրվել է Մադեյրայի պատմության գրքերում ճիշտ այնպես, ինչպես Ռաուլի* տեղափոխվելը Մադրիդի «Ատլետիկոյից» Մադրիդի «Ռեալ» հայտնի դարձավ ամբողջ Մադրիդում միայն այն պատճառով (ըստ լուրերի), որ կարմիր ու սպիտակ մարզահագուստ** կրող ակումբը չէր ցանկանում վճարել տղայի ուղեվարձը, որպեսզի նա կարողանար մարզումների հաճախել:

Կրիշտիանուն ընդամենը 10 տարեկան էր, երբ միացավ «Նասիոնալ» ակումբին: Մայրը խիստ մտահոգ էր. «Ամուսինս միշտ նրան հորդորում էր խաղալ իրենից տարիքով մեծ երեխաների հետ: Ես անհանգստանում էի, որ նա կարող է վնասվածք ստանալ, ոտքը կոտրել, բայց Դինիսը միշտ ասում էր. «Մի՛ անհանգստացիր, նրա հետևից հասնել չեն կարող, նա չափազանց արագաշարժ է»:

Ռոնալդուի փոքր-ինչ նիհար և ոսկրոտ լինելը չէր կարող վրիպել «Նասիոնալի» մարզիչների ուշադրությունից: Նրանք անմիջապես խորհուրդ տվեցին ավելի շատ ուտել՝ մի քիչ քաշ հավաքելու համար: Սակայն տղայի հմտություններին մարզիչներն ամենևին չէին կասկածում: «Անմիջապես նկատելի էր, որ նա ֆանտաստիկ է,- պատմում է Անտոնիո Մենդոսան,

---

* Raúl González Blanco - Ռաուլ Գոնսալեզ Բլանկո (ծնվ. 1977 թ.), Իսպանիայի հավաքականի և Մադրիդի «Ռեալի» հանրահայտ ֆուտբոլիստ, Չեմպիոնների լիգայի եռակի հաղթող (1998, 2000, 2002):

** Մադրիդի «Ատլետիկոյի» մարզաշապիկի գույներն են:

որը Կրիշտիանուի մարզիչն էր առաջին երկու մրցաշրջաններում, երբ նա խաղում էր սև ու սպիտակ մարզահագուստով: Արդեն զարգացած էին նրա կարողությունները՝ արագությունը, դրիբլինգը, գնդակին հարվածելու տեխնիկան, կատարողական վարպետությունը: Փողոցում ֆուտբոլ խաղալը նրան սովորեցրել էր խուսափել հարվածներից, շրջանցել մրցակիցներին և չվախենալ տղաներից, որոնք իրենից շատ ավելի մարմնեղ էին: Կոփվել էր նաև բնավորությունը, այժմ նա չափազանց խիզախ էր»:

Հիմա Մենդոսան և մյուս մարզիչները պետք է նրան օգնեին հասկանալ, որ ֆուտբոլը թիմային մարզաձև է: Ռոնալդուն կարող էր գնդակը խաղադաշտի իր կեսից գլորելով հասցնել մինչև մրցակցի դարպաս և գոլ խփել՝ գնդակը չփոխանցելով իր թիմակցին: Մրցակիցները նրան չէին անհանգստացնում: Պարտվելը տարբերակ չէր, նա ուզում էր ամեն տեղ հաղթող լինել: Նա լալիս էր ու բարկանում թիմակիցների վրա, երբ ինչ-որ բան այնպես չէր ստացվում: «Նրանք համակերպվում էին ամեն ինչի հետ, որովհետև շատ գոլ էր խփում,- պատմում է Մենդոսան: - Կարողացանք հաղթանակ տանել բոլոր հանդիպումներում 9:0 կամ 10:0 հաշիվներով»: Սակայն Ռոնալդուի ինքնահավանությունն ու գոռոզությունը խանգարում էին: Նա իրեն մյուսներից վեր էր դասում, և դժվար էր նրան որևէ խորհուրդ տալ. դա պետք էր անել առանձին, թիմակիցներից հեռու:

1995-96 թթ. մրցաշրջանում Կրիշտիանուն «Նասիոնալի» կազմում իր առաջին տարածաշրջանային տիտղոսը նվաճեց 10-12 տարեկանների լիգայում: «Պորտուն», «Բոավիշտան» և «ուղղանկյան» (այդպես են կղզու բնակիչները կոչում Պոր-

տուգալիայի մայրցամաքային մասը) բոլոր մյուս մեծ ակումբները սկսեցին հետաքրքրվել նրանով:

Ֆեռնաո Սոուզան կարծում էր, որ արդարացի կլիներ իր սանիկին թույլ տալ վճռական քայլ անել: Նա կրկին կապվեց մի մարդու հետ, որը փոխելու էր տղայի ապագան: Այդ մարդը Խոաո Մարկես Ֆրեյտասն էր, մարզի գլխավոր դատախազի օգնականը և Ֆունչալի «Սպորտինգ» ակումբի նախագահը: Հենց նա կանաչ ու սպիտակ մարզահագուստ կրող ակումբի ղեկավարությանը պատմեց այս անհավատալի տղայի մասին Քվինտա դե Ֆալկաոյից: «Սպորտինգ» ակումբը բանագնաց ուղարկեց տղայի ընտանիքի հետ խոսելու նպատակով, և Ռոնալդուն կարճ ժամանակ անց հրաժեշտ տվեց իր մանկությանը, ընտանիքին, ընկերներին և հարազատ կղզուն: Ժամանակն էր ճանապարհ հարթելու դեպի մայրցամաք:

Bookmark